

Նոր Զուգայի Թիւ 406 մեծազիր եւ տեղահան թուղթի վրայ զրուած երկսիւն Յայսմաւուրքին երկար յիշատակարանին համաձայն, այս ձեռագիրը զրուած է 1627-ին ի Սպահան, Տէր Բարսեղ գրչէն, Խօջայ Գրիգորին համար:

Արդ՝ սոյն յիշատակարանէն կ'երեւայ, որ Խօջայ Գրիգոր ունեցած է բազմաթիւ գաւազաներ, որոնցմէ կը ցանկայ յիշել «եւ միւս զբոստերն Աւղիտին. եւ կողակցին Պրն. Սարփոսազին»:

Աւղիտէն (Յուղիդէ) եւ Պր. Սարփոսազը մենք կը նոյնացնենք Խօջայ Սարփրազի եւ իր կնոջ Յուղիդէի հետ:

Խօջայ Սարփրազի նման մեծանուն իշխան մը, բնականաբար, տուն պիտի տար աւանդութեանց, եւ ասոնցմէ երկուքին արձագանդ կ'ըլլայ Տէր Յովհաննեանց.

«Աւանդութեամբ երկու մեծազործութիւնք պատմին զնմանէ՝ Շափոսազ անուն տալով փոխանակ Սարփրազի: Առաջին մեծազործութիւնն է զի հրաւիրեալ զՇահարաս արքայն (որ երկրորդ Շահարասն է) ի տուն իւր, եւ պատրաստեալ վասն նորա եւ վասն ամենայն մեծարանաց եւ նախարարաց նորա զսեղան բազմաձախ՝ մեծահանգէս եւ արքայավայել, յետ ամենայն արծաթի կարասիս եւ զպարագայս նոյն հանդիսի՝ ի պատիւ երեսաց արքային ընծայեալ է զօրացն նորա: Երկրորդ մեծազործութիւնն է՝ զի ընդ Շահարասայ երկրորդի զնացեալ ի գետն Զայսնդարութ, դարձեալ ի պատիւ շնորհացն Արքային եղեալ աս ինքն, զընթացս զետոյն (թերեւս յամառան եւ ի կարի սակաւաշուր ժամանակի զետոյն) կապեալ է ձեռմակ շահի զրամով եւ զայն գումար բաշխեալ է նոյնպէս ծառայից արքայի եղելոց ընդ նմա: Յազազս նոյն մեծազործութեան նորա՝ կամուրջն Մարնունայ մինչեւ ցայսօր ի Հայոց կոչի Շափոսազի կամուրջ. զի անդ է կապեալ նա զընթացս ջրոյն: Այս աւանդութիւնը ոչ է ի միոյ կամ յերկուց ոմանց, այլ ծանօթ է ամենայն Զուգայեցոց. ուստի ի կարգի պատմութեանս յիշատակեմ՝ զայն իբրեւ հաւաստի պատմութիւն: Եթէ ոմանց մեծազործութիւն թուիցին այն երկու ղէպք, կարծեմ թէ յոմանց եւս ստղտանիցին իբրեւ

զործք անտի փառախոհութեան, որ վնասակար է յոյժ ի Պարսկաստան: զի անշուշտ յերկու ղէպս յայնոսիկ ոչ նուազ քան զքսան հազար թուման լինելոց է ծախան. զի ոչ թեթեւ է ինչ է արքայի Պարսից հարիւրաւոր նախարարաց նորա եւ հազարաւոր ծառայից նոցին պատրաստել զսեղան մեծահարկի, ընդ նմին եւ ընծայել զարծաթի կահ եւ զկարասիս սեղանոյն, եւ զարծաթն որով զընթացս զետոյն կապեաց»: (57)

Խնձոյքին աւանդութիւնը գոնէ նշոյլ մը ունի հաւանականութեան: Շահերը, երբ մեծահարուստ Զուգայեցոց տունը կ'երթային ճաշի, երբեք «հարիւրաւոր» նախարարներով կամ «հազարաւոր» ծառաներով չէին երթար, ինչպէս Տէր Յովհաննեանց կը կարծէ, այլ Շահին կը ընկերանային քանի մը երեւելի եւ մըտերիմ արքունեաց անդամներ եւ զլիաւոր ծառաներ: Այսուհանդերձ ես այլ կը տարակուսեմ նման պատմութեանց ճշգրտութեան:

Գետը արծաթ զրամով կանգնեցնելու աւանդութեան գալով՝ կ'երեւայ թէ ան ունեցած է տարբերակներ: Հ. Ալիշան եւս «Սիսական»ին մէջ կը յիշէ օրինակ մը: Սակայն, ըստ անոր իմացածին, Շահ Արքաս Առաջին կամ Մեծն իսկ էր պատմուածքին Շահը (եւ ոչ թէ փոքրը, ինչպէս իմացած է Տէր Յովհաննեանց, թէեւ Սարփրազի ժամանակակիցը Շահ Արքաս Փոքր միայն կրնար ըլլալ): Ահա Հ. Ալիշանի տարբերակը. «Հրաւիրեալ զնա (Շահ Արքասը) ի հարսանիս որդւոյ իւրոյ՝ (Սարփրազի) պարձենայր եւ խոստանայր արգելուլ ըզջուրս Զհնակրուս գետոյ արծաթալի պարկղք. արգարեւ ասասպելաց բան»: (58)

Զուգայեցոց այս Սարփրազեան առասպելը ուրիշներու ալ վերագրուած է: Գարձեալ Հ. Ալիշան կը վկայէ, որ առասպելը փոփոխութիւն կրած է եւ Շահ Արքաս Մեծի կամ Փոքրի տեղ Շահ Հիւսէին կը յիշուի, եւ «մի ոմն յաւազաց նորին՝ Միրվէիդ խան յիշեցուցանէր, (փոխեալ զանձնն) եթէ տունն Շէհ-րիմանեանց յետս զարձոյց զգետն՝ պարկով արծաթի զրամոց եւ զղուշացուցանէր զթա-

(57) Անդ՝ էջ 90:

(58) «Սիսական», էջ 473ա: